



Սույն ուսումնասիրությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ազոբա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Բիզնես և կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավի իրականացում» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բիզնես և կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Սոցիալական աջակցության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավի իրականացում» ենթաշնորհյին ծրագրի շրջանակներում «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ենթադրամաշնորհային ծրագրով «1011.

«Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրով մշակված, ինչպես նաև 2027թ. բյուջետային հայտում ներառված ծրագրի միջոցառումների արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների գնահատման արդյունքում դրանց բարելավմանն ուղղված լրացուցիչ առաջարկությունների վերաբերյալ դիրքորոշումների գույքագրման և վերլուծության արդյունքների մասին

### 1. Ներածություն

Սոցիալական աջակցության արդյունավետ համակարգի ձևավորումը պահանջում է ոչ միայն բավարար ֆինանսական ռեսուրսների հատկացում, այլև դրանց նպատակային, թափանցիկ և արդյունքահեն կառավարում: Այս համատեքստում ծրագրային բյուջետավորումը կարևոր գործիք է, որը հնարավորություն է տալիս պետական ծախսերը կապել հանրային քաղաքականությունների նպատակների, ակնկալվող արդյունքների և սոցիալական ազդեցության հետ՝ բարձրացնելով պետական կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը:

Միննույն ժամանակ, ծրագրային բյուջետավորման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հանրային մասնակցության, մասնագիտական երկխոսության և փաստահեն առաջարկությունների մշակման ու կիրառման աստիճանով: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (այսուհետ՝ ՔՀԿ), փորձագիտական համայնքը և այլ շահագրգիռ կողմերը կարևոր դեր ունեն

բյուջետային գործընթացների թափանցիկության, հաշվետվողականության և շարունակականության բարելավման գործում՝ նպաստելով հանրային միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը և սոցիալական քաղաքականությունների կատարելագործմանը:

Այս մոտեցումների արդիականությունը հաստատվում է նաև «Միջազգային բյուջեի գործընկերություն» կազմակերպության կողմից իրականացվող «Բաց բյուջեի հետազոտության» (Open Budget Survey)<sup>1</sup> արդյունքներով: Թեև Հայաստանի մասնակցային բյուջետավորման գնահատականը 2021 թվականի համեմատ բարելավվել է (6 միավորից հասնելով 11 միավորի 2023 թվականին), այն շարունակում է զգալիորեն զիջել միջազգային լավագույն փորձին և վկայում է բյուջետային գործընթացներում հանրային մասնակցության հետագա ամրապնդման անհրաժեշտության մասին: Հետազոտության շրջանակներում Հայաստանին ներկայացված առաջարկությունները վերաբերում են բյուջետային գործընթացների թափանցիկության բարձրացմանը, հանրային մասնակցության ընդլայնմանը և բյուջետային վերահսկողության արդյունավետության ուժեղացմանը:

Այս համատեքստում «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում «Բիզնես և կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԲԿԱ ՀԿ) 2025–2026 թվականներին իրականացրել է «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ենթադրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրվել են սոցիալական աջակցության ոլորտի ծրագրային բյուջետավորման առանձնահատկությունները, գնահատվել են 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրի միջոցառումները և արդյունքային ցուցանիշները, ինչպես նաև մշակվել են ոլորտի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ թեև բյուջետային ծրագիրը հիմնականում համապատասխանում է ծրագրային բյուջետավորման գործող մեթոդաբանական պահանջներին, առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք սահմանափակում են դրա արդյունքահենությունն ու գնահատելիությունը: Մասնավորապես, բացահայտվել են միջոցառումների անվանումների և նկարագրությունների ոչ բավարար հստակություն, արդյունքային ցուցանիշների սահմանափակ բովանդակություն, որակական և ազդեցության ցուցանիշների պակաս, գենդերազգայուն ցուցանիշների բացակայություն, ինչպես նաև ծախս–արդյունք հարաբերակցության և սոցիալական ազդեցության գնահատման մեխանիզմների թերի կիրառություն: Այս խնդիրների հաղթահարման նպատակով մշակվել են

<sup>1</sup> Հղում՝ <https://internationalbudget.org/open-budget-survey/country-results/2023/armenia>:

մեթոդաբանական և տեխնիկական բնույթի առաջարկություններ, որոնք ներկայացվել են հանրային քննարկումների և աշխատանքային հանդիպումների ընթացքում:

Վերոնշյալ ենթադրամաշնորհային ծրագրի տրամաբանական շարունակությունն է «Սոցիալական աջակցության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավի իրականացում» ենթադրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի հիմնական նպատակը ոչ միայն նախորդ փուլում մշակված առաջարկությունների ներկայացումն է պետական իրավասու մարմիններին, այլև դրանց վերաբերյալ ձևավորված դիրքորոշումների գույքագրումը, վերլուծությունը և հետագա ջատագովության առաջնահերթությունների սահմանումը:

Սույն ամփոփագիրը ներկայացնում է այդ գործընթացի հիմնական արդյունքները: Այն արտացոլում է նաև սոցիալական աջակցության ոլորտի 2027 թվականի բյուջետային հայտի աշխատանքային քննարկումների շրջանակներում ներկայացված առաջարկությունների վերաբերյալ պետական մարմինների դիրքորոշումները, դրանց ընդունման աստիճանը, հիմնական հիմնավորումները և այն հարցերը, որոնք շարունակում են պահանջել լրացուցիչ մասնագիտական քննարկումներ և համակարգային բարեփոխումներ:

Ամփոփագրի նպատակն է ոչ միայն արձանագրել իրականացված ջատագովական աշխատանքի արդյունքները, այլև գնահատել, թե որքանով են փաստառի են առաջարկությունները նպաստում ծրագրային բյուջետավորման կատարելագործմանը, ինչպես նաև բացահայտել հետագա համագործակցության, հանրային մասնակցության և սոցիալական աջակցության ոլորտի քաղաքականությունների բարելավման հնարավոր ուղղությունները:

## **2. Ուսումնասիրության նպատակը, շրջանակը և մեթոդաբանական մոտեցումները**

Սույն ամփոփագիրը մշակվել է «Սոցիալական աջակցության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավի իրականացում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ նպատակ ունենալով գնահատել սոցիալական աջակցության ոլորտի 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների նկատմամբ պետական մարմինների դիրքորոշումները, վերլուծել դրանց ընդունման աստիճանը, ինչպես նաև բացահայտել այն հիմնական ուղղությունները, որոնք պահանջում են հետագա մասնագիտական քննարկումներ և ջատագովական աշխատանք:

Ուսումնասիրությունը հանդիսանում է 2025–2026 թվականներին իրականացված «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ենթադրամաշնորհային ծրագրի տրամաբանական

շարունակությունը: Եթե նախորդ ծրագրի հիմնական նպատակը ոլորտի ծրագրային բյուջետավորման վերլուծությունը, խնդիրների բացահայտումը և առաջարկությունների մշակումն էր, ապա սույն ծրագրի շրջանակներում ուշադրությունը կենտրոնացվել է այդ առաջարկությունների առաջմղման, պետական մարմինների արձագանքների գնահատման և դրանց հիման վրա հետագա ջատագովական գործողությունների պլանավորման վրա:

Ուսումնասիրության առարկան 2027 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում ներկայացված առաջարկություններն են, որոնք վերաբերում են 1011 բյուջետային ծրագրի միջոցառումների անվանումների և նկարագրությունների հստակեցմանը, արդյունքային ցուցանիշների կատարելագործմանը, ծրագրային բյուջետավորման արդյունքահենության բարձրացմանը և սոցիալական քաղաքականության ազդեցության գնահատման մեխանիզմների զարգացմանը:

Ամփոփագրի պատրաստման ընթացքում կիրառվել է որակական վերլուծության մեթոդաբանություն, որը ներառել է.

- նախորդ ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացված բյուջետային վերլուծությունների և մշտադիտարկման արդյունքների ուսումնասիրությունը,
- ՀՀ ԱՍՀՆ ՄԺԾԾ 2027-2029 թթ. ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը<sup>2</sup>
- 2027 թվականի բյուջետային հայտի նախագծի<sup>3</sup>, ներառյալ 2028-2029 թվականների թարմանցված հայտերի համապատասխան ծրագրային փաստաթղթերի վերլուծությունը,
- հանրային և աշխատանքային քննարկումների ընթացքում ներկայացված առաջարկությունների համակարգումը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների կողմից աշխատանքային քննարկումների ընթացքում ներկայացված բանավոր դիրքորոշումների գույքագրումը,
- առաջարկությունների բովանդակային դասակարգումը և դրանց նկատմամբ արտահայտված դիրքորոշումների համեմատական վերլուծությունը:

Ուսումնասիրության ընթացքում առանձնացվել են առաջարկությունների երկու հիմնական խմբեր՝ տեխնիկական բնույթի առաջարկություններ (միջոցառումների անվանումների, նկարագրությունների և առանձին արդյունքային ցուցանիշների ճշգրտում) և մեթոդաբանական կամ համակարգային բնույթի առաջարկություններ (որակական և ազդեցության ցուցանիշների ներդրում, ծախս-արդյունք

<sup>2</sup> Հղում՝ <https://social.gov.am/articles/budget/projects>

<sup>3</sup> 2027 թվականի բյուջետային հայտ՝ ներառյալ 2028- 2029 թվականների թարմացված հայտերի, [ինչպես նաև 2027 թվականի ծախսեր](#), հղում՝ <https://social.gov.am/articles/budget/projects>

հարաբերակցության գնահատում, արդյունքային ցուցանիշների մեթոդաբանական կատարելագործում և այլն): Նման դասակարգումը հնարավորություն է տվել առավել ամբողջական գնահատելու պետական մարմինների արձագանքների առանձնահատկությունները և բացահայտելու այն ուղղությունները, որոնց իրականացումը պահանջում է լրացուցիչ ինստիտուցիոնալ, մեթոդաբանական կամ տվյալահեն նախապայմանների ապահովում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ամփոփագրում ներկայացված գնահատականները հիմնված են ուսումնասիրության իրականացման պահին առկա տեղեկատվության վրա: Քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2027 թվականի բյուջետային հայտերի հանրային քննարկումների պաշտոնական ամփոփ տեղեկատվությունը դեռևս հրապարակված չէ, ներկայացված որոշ եզրակացություններ հիմնված են պետական մարմինների ներկայացուցիչների կողմից աշխատանքային քննարկումների ընթացքում ներկայացված դիրքորոշումների, ինչպես նաև նախարարության գործընկերների կողմից հուլիսի 1-ին աշխատանքային կարգով ներկայացված «ԱՍՀՆ ՄԺԾԾ 2027-2029թթ. բյուջետային հայտի/ծրագրերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթի» վրա, ինչը հնարավորություն տվեց ճշգրտել ներկայացված գնահատականները: Հետագայում պաշտոնական տեղեկատվության հրապարակումը հնարավորություն կտա գնահատել առաջարկությունների վերջնական արտացոլումը բյուջետային հայտում:

Այս մեթոդաբանական մոտեցումը հնարավորություն է տվել ոչ միայն արձանագրել պետական մարմինների արձագանքները ներկայացված առաջարկությունների վերաբերյալ, այլև գնահատել դրանց քաղաքական և գործնական նշանակությունը, բացահայտել համակարգային բարեփոխումների հիմնական ուղղությունները և ձևավորել հետագա ջատագովության առաջնահերթությունները:

### **3. Բյուջետային վերլուծությամբ բացահայտված հիմնական խնդիրները**

2025–2026 թվականներին իրականացված «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագիրը հիմնականում կազմված է ծրագրային բյուջետավորման գործող մեթոդաբանական պահանջներին համապատասխան: Միաժամանակ իրականացված վերլուծությունը բացահայտեց մի շարք համակարգային և մեթոդաբանական խնդիրներ, որոնք սահմանափակում են ծրագրի արդյունքահեն կառավարումը, կատարողականի գնահատելիությունը և հանրային միջոցների օգտագործման արդյունավետության գնահատման հնարավորությունները:

Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ առկա խնդիրները կարելի է պայմանականորեն խմբավորել հինգ հիմնական ուղղություններով:

### **3.1. Միջոցառումների ձևակերպումների ոչ բավարար հստակություն**

Ծրագրի մի շարք միջոցառումների անվանումներն ու նկարագրությունները լիարժեք չեն արտացոլում դրանց բովանդակությունը և իրականացվող գործառնությունները: Որոշ դեպքերում նկարագրությունները չափազանց ընդհանրացված են, մյուսներում՝ հակառակը, պարունակում են միջոցառման անվանման կրկնություններ կամ անհամաչափ ծավալուն ձևակերպումներ: Արդյունքում դժվարանում է ինչպես միջոցառումների բովանդակային ընկալումը, այնպես էլ տարբեր տարիների բյուջետային ծրագրերի համադրելի վերլուծությունը:

Այս խնդիրը հատկապես ակնհայտ էր սոցիալական դեպքի վարման, սոցիալական շտապ օգնության, սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման և բնակարանային աջակցությանն առնչվող առանձին միջոցառումների նկարագրություններում, որտեղ գործող ձևակերպումները չեն արտացոլում ծառայությունների ամբողջական շրջանակը:

### **3.2. Արդյունքային ցուցանիշների սահմանափակ տեղեկատվական արժեքը**

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գործող արդյունքային ցուցանիշների գերակշիռ մասը նկարագրում է իրականացված գործողությունների կամ ծառայությունների ծավալը՝ շահառուների թիվը, տրամադրված ծառայությունների քանակը կամ ֆինանսական հատկացումները:

Միաժամանակ հիմնականում բացակայում են այնպիսի ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտային գնահատելու, թե ծառայություններն ինչ արդյունք են ապահովել շահառուների համար, որքանով են լուծվել բացահայտված սոցիալական խնդիրները և ինչ փոփոխություններ են արձանագրվել ծրագրի իրականացման արդյունքում:

Արդյունքում ծրագրի կատարողականի գնահատումը հիմնականում հիմնվում է գործունեության ծավալի, այլ ոչ թե դրա արդյունավետության կամ ազդեցության վրա:

### **3.3. Որակական և ազդեցության գնահատման մեխանիզմների բացակայություն**

Վերլուծության ընթացքում արձանագրվեց, որ ծրագրում գրեթե բացակայում են որակական, ժամկետային և ազդեցության ցուցանիշները, որոնք հնարավորություն կտային գնահատելու սոցիալական աջակցության իրական ազդեցությունը շահառուների կյանքի վրա:

Մասնավորապես, չեն չափվում շահառուների գոհունակությունը, սոցիալական ծառայությունների հասանելիությունը, դեպքի վարման արդյունավետությունը, սոցիալական ներառման աստիճանը, սոցիալական խնդիրների հետևողական լուծման մակարդակը կամ ծրագրերից հետո շահառուների ինքնուրույնության բարձրացումը:

Այս հանգամանքը սահմանափակում է ոչ միայն ծրագրի արդյունավետության գնահատումը, այլև ապագայում քաղաքական որոշումների կայացման համար անհրաժեշտ ապացուցողական հիմքերի ձևավորումը:

### **3.4. Արդյունքահեն կառավարման և ծախս-արդյունք գնահատման սահմանափակումները**

Ծրագրային բյուջետավորման կարևորագույն սկզբունքներից մեկը բյուջետային միջոցների և ձեռք բերված արդյունքների միջև կապի գնահատումն է: Սակայն իրականացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գործող ցուցանիշների համակարգում գրեթե բացակայում են ծախս-արդյունք հարաբերակցության գնահատման գործիքները:

Չեն կիրառվում մեկ շահառուի, մեկ լուծված սոցիալական դեպքի կամ մեկ հաջողությամբ վերաինտեգրված շահառուի հաշվով կատարված ծախսերի գնահատման ցուցանիշներ, ինչը սահմանափակում է պետական միջոցների արդյունավետ օգտագործման համեմատական գնահատման հնարավորությունները:

Միաժամանակ ծրագրի ռազմավարական նպատակների, միջոցառումների և արդյունքային ցուցանիշների միջև կապը միշտ չէ, որ բավարար չափով հստակ է, ինչի հետևանքով դժվարանում է յուրաքանչյուր միջոցառման՝ ծրագրի ընդհանուր նպատակների իրականացմանը նպաստելու մակարդակի գնահատումը:

### **3.5. Մոնիթորինգի և սոցիալական ազդեցության գնահատման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը**

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ գործող մոնիթորինգի համակարգը հիմնականում կենտրոնացած է ծառայությունների մատուցման փաստի և ծավալի արձանագրման վրա:

Միաժամանակ ծրագրում սահմանափակ են այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային գնահատելու ծառայությունների որակը, շահառուների կարիքների բավարարվածության մակարդակը, սոցիալական ազդեցությունը և ձեռք բերված արդյունքների կայունությունը:

Այս խնդիրը հատկապես ակնառու է սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման միջոցառման օրինակով, որտեղ ներկայում գնահատվում են հիմնականում բնակարանների զբաղվածության մակարդակը կամ հաշվառված շահառուների թիվը, մինչդեռ չեն գնահատվում հերթացուցակների դիմամիկան, մատուցվող սոցիալական ծառայությունների որակը, շահառուների գոհունակությունը և կայուն բնակարանային լուծումների ապահովման արդյունքները:

Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ ծրագրային բյուջետավորման գործող համակարգի հետագա կատարելագործումը պահանջում է ոչ միայն առանձին միջոցառումների տեխնիկական բարելավում, այլև արդյունքային կառավարման մեթոդաբանության զարգացում, ազդեցության գնահատման գործիքների ներդրում և արդյունքային ցուցանիշների վերանայում՝ սոցիալական քաղաքականությունների արդյունավետության առավել ամբողջական գնահատման նպատակով:

#### **4. Մշակված առաջարկությունների համակարգը**

Բյուջետային վերլուծությամբ բացահայտված խնդիրների հիման վրա մշակվել են առաջարկություններ, որոնք նպատակ ունեն բարձրացնել 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրի արդյունքահենությունը, գնահատելիությունը և կառավարման արդյունավետությունը:

Ի տարբերություն առանձին տեխնիկական փոփոխությունների, առաջարկությունների ամբողջությունը ձևավորում է փոխկապակցված բարեփոխումների համակարգ, որն ուղղված է ոչ միայն ծրագրի առանձին միջոցառումների կատարելագործմանը, այլև սոցիալական աջակցության ոլորտում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության աստիճանական զարգացմանը:

Վերլուծության արդյունքների հիման վրա առաջարկությունները դասակարգվել են երեք փոխկապակցված ուղղություններով:

##### **4.1. Բյուջետային միջոցառումների նկարագրման կատարելագործում**

Առաջին խումբը ներառում է այն առաջարկությունները, որոնք վերաբերում են միջոցառումների անվանումների և նկարագրությունների բարելավմանը:

Իրականացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առանձին միջոցառումների գործող ձևակերպումները միշտ չէ, որ ամբողջությամբ արտացոլում են իրականացվող գործառնությունները, իսկ որոշ դեպքերում անվանումներն ու նկարագրությունները կրկնում են միմյանց կամ չեն ապահովում անհրաժեշտ տեղեկատվական ամբողջականություն:

Այս ուղղությամբ առաջարկվել է.



- վերանայել միջոցառումների անվանումները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը միջոցառումների իրական բովանդակությանը,
- վերախմբագրել նկարագրությունները՝ բացառելով կրկնությունները և հստակ ներկայացնելով իրականացվող ծառայությունների շրջանակը,
- ապահովել միջոցառումների ձևակերպումների միասնական կառուցվածքը և համադրելիությունը:

Մասնավորապես, առաջարկվել է 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրի՝

- 1011-11003-«Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռքբերում» միջոցառման Նկարագրությունը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝ «Սոցիալական աշխատողի կողմից տնային այցելությունների միջոցով ընտանիքի, դրա յուրաքանչյուր անդամի սոցիալական գնահատում, անապահով սոցիալական խմբերին հայտնաբերելու համար»:
- 1011-11005 «Սոցիալական շտապ օգնություն» միջոցառման նկարագիրը դարձնել միջոցառման անվանում, իսկ նկարագիրը ձևակերպել նոր խմբագրությամբ:
- 1011-11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման նկարագրությունը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝ «Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի բնակիչներին օրենսդրությամբ սահմանված ծառայությունների մատուցում, շենքերի պահպանման, տեխնիկական սպասարկման ապահովում, սոցիալական աջակցության ծրագրերով նախատեսված բնափրային օգնության պահպանման և բաշխման կազմակերպում»:
- 1011-12007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում» միջոցառման անվանումը և նկարագրությունը վերախմբագրել՝ դրանց միջև հակասությունը վերացնելու համար:
- 1011-12009 «Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում» միջոցառման անվանումը կրճատել, քանի որ այն ամբողջությամբ կրկնում է միջոցառման նկարագրությունը:
- 1011-12010 «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում» միջոցառման անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ ձեռքբերված բնակարանների վարձավճարի փոխհատուցում»:

- 1011-12011 «ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր» միջոցառման՝
  - անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ՀՀ վերադարձող քաղաքացիներին վարձակալությամբ ձեռքբերված բնակարանների վարձավճարի փոխհատուցում
  - նկարագրությունում ավելացնել, թե որ ծրագրի շրջանակներում է իրականացվում փոխհատուցման տրամադրումը և հարմարեցնել ՀՀ վերադարձող քաղաքացիներին տրամադրվող փոխհատուցմանը»:

Այս փոփոխությունները նպատակ ունեն բարձրացնելու բյուջետային ծրագրի թափանցիկությունը, ընթեռնելիությունը և վերլուծական կիրառելիությունը:

#### **4.2. Արդյունքային ցուցանիշների կատարելագործում**

Առաջարկությունների երկրորդ խումբը վերաբերում է արդյունքային ցուցանիշների համակարգի զարգացմանը:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գործող ցուցանիշները հիմնականում գնահատում են իրականացված գործողությունների ծավալը, մինչդեռ սահմանափակ հնարավորություն են տալիս գնահատելու ծառայությունների արդյունավետությունը, որակը և շահառուների համար ստեղծված իրական արդյունքները:

Այս նպատակով առաջարկվել է վերանայել գործող արդյունքային ցուցանիշների համակարգը՝

- համալրել այն միջոցառումների բոլոր հիմնական գործառույթներն արտացոլող ցուցանիշներով,
- ներդնել որակական և գենդերազգայուն ցուցանիշներ,
- ներառել շահառուների գոհունակության, ծառայությունների հասանելիության, սոցիալական դեպքերի լուծման և սոցիալական արդյունքների գնահատման ցուցանիշներ,
- սահմանել արդյունքների գնահատման հստակ ժամանակային միջակայքներ:

Մասնավորապես, առաջարկվել է 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրի՝

- 1011-11003-«Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռքբերում» միջոցառման արդյունքային չափորոշիչները լրացնել հետևյալ նոր ցուցանիշներով՝
  - Շահառուներին հայտնաբերելուց հետո սոցիալական ծառայության տրամադրման միջին ժամկետը, օր, ամիս:

- Գնահատված կարիքներից սոցիալական ծառայություններ ստացողների տեսակարար կշիռը, տոկոս:
  - Սոցիալական գնահատման արդյունքներից շահառուների բավարարվածության մակարդակը, տոկոս:
  - Դեպքի վարման արդյունքում լուծված կամ մասամբ լուծված սոցիալական դեպքերի տեսակարար կշիռը, տոկոս:
  - Դեպքի վարման ավարտից հետո կրկնակի դիմումների տեսակարար կշիռը, տոկոս:
- 1011-11007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման միջոցառման արդյունքային չափորոշիչները լրացնել հետևյալ նոր ցուցանիշներով՝
- Սոցիալական աջակցության ծրագրերով ծառայություններ ստացած անձանց թիվը, մարդ,
  - Սոցիալական բնակարանային ֆոնդի բնակարանների զբաղվածության մակարդակը, տոկոս,
  - «Սոցիալական բնակարանային ֆոնդում հաշվառված անձանց, ընտանիքների թիվը» չափորոշիչը փոխարինել «Սոցիալական բնակարանային ֆոնդի հերթացուցակում հաշվառված անձանց թիվ» չափորոշիչով,
  - Բնակիչների գոհունակության մակարդակը ստացված սոցիալական ծառայություններից, տոկոս:
- 1011-12001 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» միջոցառման արդյունքային չափորոշիչները լրացնել հետևյալ նոր ցուցանիշներով՝
- Նպաստ ստացող ընտանիքների տեսակարար կշիռը, որոնց սոցիալական անապահովության միավորը նվազել է, տոկոս:
  - Անապահովության նվազագույն ցուցանիշների բարելավում արձանագրած նպաստ ստացող ընտանիքների տեսակարար կշիռը, տոկոս:
- 1011-12007 «Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում» միջոցառման արդյունքային չափորոշիչները լրացնել հետևյալ նոր ցուցանիշով՝ «տրամադրվող փոխհատուցման չափը, դրամ:
- 1011-12009 «Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում» միջոցառման արդյունքային չափորոշիչները ներկայացնել հետևյալ խմբագրությամբ՝
- Շրջանավարտների թիվը, մարդ:
  - Փոխհատուցման տրամադրման տևողություն, ամիս:

- Փոխհատուցման ամսական չափ, հազար դրամ:
- 1011-12010 «ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում» միջոցառման արդյունքային չափորոշիչները ներկայացնել հետևյալ խմբագրությամբ՝
  - Շահառու ընտանիքների թիվը, ընտանիք:
  - Փոխհատուցում ստացող շահառուների տեսակարար կշիռը, տոկոս:
  - Փոխհատուցման տրամադրման տևողություն, ամիս:
  - Փոխհատուցման ամսական չափ, հազար դրամ:
- 1011-12011 «ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր» միջոցառման արդյունքային չափորոշիչները ներկայացնել հետևյալ խմբագրությամբ՝
  - Շահառու ընտանիքների թիվը, ընտանիք:
  - Փոխհատուցում ստացող շահառուների տեսակարար կշիռը բնակարանի կարիք ունեցող շահառուների թվում, տոկոս:
  - Ծրագրից հետո կրկնակի սոցիալական աջակցության կարիք չունեցող շահառուների տեսակարար կշիռը, տոկոս:

Առաջարկվող փոփոխությունները հնարավորություն կտան ծրագրի կատարողականը գնահատել ոչ միայն ծառայությունների ծավալի, այլև դրանց արդյունավետության և սոցիալական ազդեցության տեսանկյունից:

#### **4.3. Ծրագրային բյուջետավորման մեթոդաբանական զարգացում**

Երրորդ ուղղությունը ներառում է առավել համակարգային բնույթի առաջարկությունները, որոնք վերաբերում են ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության կատարելագործմանը:

Մասնավորապես առաջարկվել է.

- մշակել սոցիալական աջակցության ոլորտի արդյունքային ցուցանիշների միասնական մեթոդաբանական շրջանակ,
- ներդնել ծախս-արդյունք հարաբերակցության գնահատման ցուցանիշներ,
- ընդլայնել ազդեցության գնահատման գործիքակազմը,
- ապահովել ծրագրի ռազմավարական նպատակների, միջոցառումների և արդյունքային ցուցանիշների միջև առավել հստակ տրամաբանական կապ,
- կազմակերպել ոլորտային մասնագետների վերապատրաստումներ արդյունքահեն կառավարման և ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության վերաբերյալ:

Այս առաջարկություններն ունեն երկարաժամկետ բնույթ և միտված են սոցիալական աջակցության ոլորտում ծրագրային բյուջետավորման որակի աստիճանական կատարելագործմանը՝ նպաստելով հանրային միջոցների առավել արդյունավետ կառավարմանը և քաղաքականությունների ազդեցության գնահատման կարողությունների զարգացմանը:

#### **4.4. Առաջարկությունների համակարգի ընդհանուր գնահատական**

Առաջարկությունների ամբողջությունը ցույց է տալիս, որ բարելավումները վերաբերում են ոչ միայն առանձին միջոցառումների խմբագրմանը, այլև ծրագրային բյուջետավորման արդյունքահետևանքային բարձրացմանը:

Դրանք փոխլրացնում են միմյանց և ձևավորում են միասնական բարեփոխումների տրամաբանություն, որի շրջանակներում տեխնիկական բնույթի փոփոխությունները հիմք են ստեղծում արդյունքային կառավարման կատարելագործման համար, իսկ մեթոդաբանական առաջարկությունները՝ սոցիալական քաղաքականությունների արդյունավետության առավել ամբողջական գնահատման և ապացույցների վրա հիմնված որոշումների կայացման համակարգի զարգացման համար:

Հենց այս համատեքստում են հետագայում դիտարկվել պետական մարմինների դիրքորոշումները, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու, թե առաջարկվող բարեփոխումների որ ուղղություններն են ստացել առավել մեծ աջակցություն, և որոնք են շարունակում պահանջել լրացուցիչ մասնագիտական քննարկումներ ու ջատագովական աշխատանք:

#### **5. Պետական մարմինների դիրքորոշումների վերլուծության արդյունքները**

2027 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում ներկայացված առաջարկությունների քննարկումները հնարավորություն տվեց գնահատելու ոչ միայն դրանց բովանդակային ընդունելիությունը, այլև պետական մարմինների պատրաստակամությունը՝ ընդունելու ծրագրային բյուջետավորման հետագա կատարելագործման ուղղությամբ առաջարկվող փոփոխությունները: Գույքագրման արդյունքները մանրամասն ներկայացված են կից Հավելվածում:

Իրականացված գույքագրման արդյունքների և աշխատանքային քննարկումների ընթացքում հնչեցված դիրքորոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայացված առաջարկությունների նկատմամբ պետական մարմինների արձագանքները միատեսակ չեն եղել: Դրանք պայմանավորված են ինչպես առաջարկությունների բովանդակությամբ և իրագործելիությամբ, այնպես էլ գործող մեթոդաբանական, ինստիտուցիոնալ և տեղեկատվական հնարավորություններով:

Ամփոփաթերթում ներկայացված գույքագրման արդյունքների համաձայն՝ 40 առաջարկություններից 21-ը (52.5%-ը) նշված են որպես ամբողջությամբ ընդունված, 12-ը (30.0%-ը)՝ ընդունված ի գիտություն, իսկ 7-ը (17.5%-ը)՝ չընդունված: Այս պատկերը արտացոլում է պետական մարմնի ներկայացրած դիրքորոշումը տվյալ առաջարկության վերաբերյալ և ինքնին չի նշանակում, որ առաջարկությունն արդեն ամբողջությամբ ներառվել է բյուջետային փաստաթղթերում կամ գործնականում: Այն դեպքերում, երբ ամփոփաթերթում առկա է նաև փաստացի կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկություն, այն դիտարկվում է առանձին՝ որպես իրականացված փոփոխության փաստական արձանագրում:

Այս պատկերը ցույց է տալիս նաև, որ պետական մարմիններն առավել պատրաստակամ են ընդունելու այն առաջարկությունները, որոնք հնարավոր է իրականացնել գործող իրավական և մեթոդաբանական շրջանակներում՝ առանց համակարգային փոփոխությունների անհրաժեշտության: Միաժամանակ առավել զգուշավոր մոտեցում է արձանագրվել (ընդունվել է ի գիտություն) այն առաջարկությունների նկատմամբ, որոնց իրականացումը պահանջում է մեթոդաբանությունների լրամշակում, լրացուցիչ տվյալների հավաքագրում կամ կառավարման գործող համակարգերի վերանայում:

### **5.1. Առավել աջակցություն ստացած առաջարկությունները**

Վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել դրական արձագանք են ստացել տեխնիկական բնույթի առաջարկությունները, որոնք վերաբերում են միջոցառումների անվանումների, նկարագրությունների և առանձին արդյունքային ցուցանիշների ճշգրտմանը:

Մասնավորապես, պետական մարմինների ներկայացուցիչները դրական են գնահատել այն առաջարկությունները, որոնք նպաստում են ծրագրային փաստաթղթերի հստակությանը, տեղեկատվական ամբողջականությանը և բյուջետային ծրագրերի առավել հասկանալի ներկայացմանը:

Դրական են ընդունվել նաև մի շարք առաջարկություններ, որոնք վերաբերում են գործող քանակական ցուցանիշների ձևակերպումների կատարելագործմանը և դրանց համապատասխանեցմանը միջոցառումների փաստացի բովանդակությանը:

Այս արձագանքները վկայում են, որ ծրագրային բյուջետավորման տեխնիկական կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության մոտեցումները մեծապես համընկնում են:

### **5.2. Քննարկման ենթակա մնացած առաջարկությունները**

Մեթոդաբանական և համակարգային բնույթի առաջարկությունների նկատմամբ արձագանքները զգալիորեն ավելի զգույշ են: Դրանց վերաբերյալ առկա տեղեկատվությունը հիմնականում վերաբերում է պետական մարմնի դիրքորոշմանը և չի կարող մեկնաբանվել որպես առաջարկությունների փաստացի իրականացում: Հավելված 1-ում մի շարք առաջարկությունների դեպքում ուղղակիորեն նշվում է, որ դրանք կարող են դիտարկվել հաջորդ տարվա բյուջետային հայտերում, իսկ առանձին առաջարկությունների մասով արձանագրվել է, որ 2027 թվականի բյուջետային հայտում դրանց արտացոլումը տվյալ պահին հնարավոր չէ:

Առավել ակնառու օրինակներից է 1011-11003 միջոցառման համար առաջարկված որակական և արդյունքային ցուցանիշների խումբը: Դրանք ներառում են սոցիալական ծառայության տրամադրման միջին ժամկետը, գնահատված կարիքներից ծառայություններ ստացողների տեսակարար կշիռը, շահառուների բավարարվածության մակարդակը, լուծված կամ մասամբ լուծված դեպքերի տեսակարար կշիռը և դեպքի վարման ավարտից հետո կրկնակի դիմումների տեսակարար կշիռը: Ամփոփաթերթում այս ցուցանիշների յուրաքանչյուրի վերաբերյալ նշվում է, որ առաջարկը կարող է դիտարկվել հաջորդ տարվա բյուջետային հայտերում:

Միաժամանակ 1011-12001 միջոցառման դեպքում ցուցանիշների վերանայումը կապվել է 2026 թվականի հուլիսի 1-ից ներդրվող անապահովության գնահատման նոր համակարգի հետ, իսկ 1011-12010 և 1011-12011 միջոցառումների առանձին չափորոշիչների առաջարկված խմբագրումները չեն ընդունվել: Այս օրինակները ցույց են տալիս, որ առաջարկությունների առաջմղման հաջորդ փուլում անհրաժեշտ է տարբերակել ոչ միայն «ընդունված/չընդունված» կարգավիճակը, այլև այն, թե ինչ պայմաններով և որ ժամկետում կարող է հնարավոր լինել դրանց հետագա կիրառումը:

Հիմնական սահմանափակումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ համապատասխան տվյալների բացակայություն կամ սահմանափակ հասանելիություն, տվյալների հավաքագրման լրացուցիչ բեռ, ցուցանիշների չափման միասնական մեթոդաբանության բացակայություն, նոր գնահատման համակարգերի ներդրման անհրաժեշտություն և որոշ դեպքերում՝ գործող իրավական կամ ընթացակարգային շրջանակների սահմանափակումներ: Դրանց հաղթահարումը պահանջում է փուլային մոտեցում՝ նախ տվյալների և մեթոդաբանության նախապատրաստում, ապա փորձարկում և միայն դրանից հետո՝ համապատասխան ցուցանիշների ներառում բյուջետային հայտերում:

Կարևոր է նաև տարբերակել առաջարկության անհրաժեշտությունը և դրա տվյալ պահին իրագործելիությունը: Պետական մարմնի արձագանքներից բխում է, որ մի շարք որակական և ազդեցության ցուցանիշների նկատմամբ բովանդակային առարկություն չի արձանագրվել, սակայն դրանց կիրառումը պայմանավորված է լրացուցիչ մեթոդաբանական և տեղեկատվական նախապայմաններով: Հետևաբար այդ առաջարկությունները նպատակահարմար է պահպանել որպես միջնաժամկետ և երկարաժամկետ բարեփոխումների օրակարգի մաս:

### 5.2.1. Որակական և ազդեցության ցուցանիշների ներդրման գործնական նախապայմանները

Առաջարկվող որակական և ազդեցության ցուցանիշների ներդրումը նպատակ ունի անցում կատարել ծառայությունների մատուցման ծավալի պարզ արձանագրումից դեպի ծառայության որակի, արդյունքի և շահառուի վիճակի փոփոխության գնահատում: Յուրաքանչյուր ցուցանիշի կիրառումը պետք է նախապես կապել դրա չափման նպատակի, անհրաժեշտ տվյալների աղբյուրի և տվյալների հավաքագրման հնարավորության հետ:

- *Շահառուների բավարարվածության մակարդակ* — հնարավորություն է տալիս գնահատել ծառայության որակը շահառուի տեսանկյունից: Անհրաժեշտ են ստանդարտացված հարցումներ կամ հետադարձ կապի գործիքներ, իսկ հիմնական ռիսկը տվյալների հավաքագրման միասնական մեթոդաբանության բացակայությունն է: Ներդրման առավել իրատեսական փուլը կարող է լինել նախ փորձնական կիրառումը սահմանափակ թվով ծառայությունների շրջանակում:
- *Լուծված կամ մասամբ լուծված սոցիալական դեպքերի տեսակարար կշիռ* — հնարավորություն է տալիս գնահատել դեպքի վարման արդյունքը, այլ ոչ միայն իրականացված այցելությունների կամ գնահատումների թիվը: Անհրաժեշտ է սահմանել «լուծված» և «մասամբ լուծված» դեպքերի միասնական չափանիշներ և ապահովել դրանց գրանցումը վարչական տվյալներում:
- *Ծրագրից հետո կրկնակի սոցիալական աջակցության կարիք չունեցող շահառուների տեսակարար կշիռ* — հնարավորություն է տալիս դիտարկել արդյունքի կայունությունը: Անհրաժեշտ է ապահովել շահառուի հետագա վիճակի դիտարկման և տվյալների համադրման մեխանիզմներ, ինչը ենթադրում է լրացուցիչ ժամանակային և կազմակերպական ռեսուրսներ:
- *Ծախս-արդյունք հարաբերակցության ցուցանիշներ* — հնարավորություն են տալիս կապել հանրային ծախսը ստացված արդյունքի հետ: Դրանց կիրառման համար անհրաժեշտ է միասնական հաշվարկման մեթոդաբանություն, ծախսերի և արդյունքների համադրելի տվյալներ և համապատասխան հաշվարկային հիմք: Այդ պատճառով դրանց ներդրումը առավել իրատեսական է մեթոդաբանության նախնական մշակման և փորձարկման փուլից հետո:

Ընդհանուր առմամբ, առաջարկվող ցուցանիշների ներդրումը նպատակահարմար է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ՝

- 1) ցուցանիշների սահմանումների և հաշվարկման մեթոդաբանության համաձայնեցում,
- 2) տվյալների աղբյուրների և պատասխանատու մարմինների հստակեցում,
- 3) փորձնական տվյալների հավաքագրում,
- 4) արդյունքների վերլուծություն և մեթոդաբանության ճշգրտում, և
- 5) ցուցանիշների աստիճանական ներառում բյուջետային հայտերում:



### 5.3. Պետական մարմինների դիրքորոշումների հիմնական միտումները

Գույքագրման արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել մի քանի կարևոր միտումներ:

*Առաջին*՝ պետական մարմինները բաց են ծրագրային բյուջետավորման տեխնիկական կատարելագործման նկատմամբ և պատրաստակամ են քննարկելու այն առաջարկությունները, որոնք նպաստում են ծրագրային փաստաթղթերի որակի բարելավմանը:

*Երկրորդ*՝ համակարգային բնույթի բարեփոխումների նկատմամբ պահպանվում է զգուշավոր մոտեցում, որը պայմանավորված է ոչ այնքան առաջարկությունների բովանդակությամբ, որքան դրանց իրագործման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ և մեթոդաբանական նախապայմաններով:

*Երրորդ*՝ աշխատանքային քննարկումները ցույց տվեցին, որ քաղաքացիական հասարակության և պետական մարմինների միջև ձևավորվել է մասնագիտական երկխոսության արդյունավետ հարթակ, որի շրջանակներում առաջարկությունները դիտարկվում են որպես ոչ միայն քննադատական դիտարկումներ, այլ ոլորտի զարգացմանը նպաստող փորձագիտական ներդրում:

### 5.4. Զատագովության գործընթացից քաղված հիմնական դասերը

Ներկայացված առաջարկությունների վերաբերյալ ձևավորված դիրքորոշումները ցույց են տալիս, որ սոցիալական աջակցության ոլորտում ծրագրային բյուջետավորման հետագա կատարելագործումը նպատակահարմար է իրականացնել փուլային մոտեցմամբ:

Առաջին փուլում առավել իրատեսական են տեխնիկական և կազմակերպական բնույթի փոփոխությունները, որոնք կարող են իրականացվել գործող համակարգի շրջանակներում:

Միաժամանակ մեթոդաբանական և համակարգային բարեփոխումները պահանջում են շարունակական մասնագիտական երկխոսություն, և համապատասխան ինստիտուցիոնալ ու մեթոդաբանական նախապայմանների ձևավորում: Այսպիսով, իրականացված զատագովության գործընթացը ցույց տվեց, որ քաղաքացիական հասարակության կողմից ներկայացվող փաստահեն առաջարկությունները կարող են դառնալ պետական քաղաքականությունների կատարելագործման արդյունավետ գործիք: Միաժամանակ վերլուծությունը փաստում է, որ արդյունքահեն ծրագրային բյուջետավորման զարգացումը պահանջում է ոչ միայն առանձին տեխնիկական բարելավումներ, այլև շարունակական մասնագիտական երկխոսություն, մեթոդաբանական զարգացում և հանրային մասնակցության ինստիտուցիոնալ

ամրապնդում: Այս պայմաններում ձևավորված համագործակցությունը կարող է հիմք հանդիսանալ սոցիալական աջակցության ոլորտում առավել արդյունավետ, հաշվետու և արդյունքահեն բյուջետային քաղաքականությունների հետագա զարգացման համար:

### 5.5. Հիմնական ռիսկերը և անհրաժեշտ նախապայմանները

Վերլուծության և գույքագրման արդյունքները ցույց են տալիս, որ առաջարկությունների հետագա իրականացման հիմնական ռիսկերը կապված են ոչ միայն առաջարկությունների բովանդակության, այլև դրանց կիրառման համար անհրաժեշտ նախապայմանների հետ:

- *Տվյալների հասանելիություն և որակ* — որակական և ազդեցության որոշ ցուցանիշների հաշվարկը պահանջում է նոր կամ լրացուցիչ տվյալներ, որոնց առկայությունը կամ պարբերականությունը ներկայումս բավարար չէ:
- *Միասնական մեթոդաբանություն* — անհրաժեշտ է սահմանել միասնական հասկացություններ, հաշվարկման մեթոդներ և տվյալների աղբյուրներ՝ նոր ցուցանիշների կիրառումը գործող հաշվետվողականության մեխանիզմներին, այդ թվում՝ եռամսյակային հաշվետվողականության պահանջներին համապատասխանեցնելով:
- *Ինստիտուցիոնալ կարողություններ* — նոր ցուցանիշների հավաքագրման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական կարողություններ և պատասխանատվության հստակ բաշխում:
- *Լրացուցիչ տեղեկատվության հավաքագրման բեռ և ռեսուրսներ* — նոր տվյալների հավաքագրումը կարող է ավելացնել վարչական բեռը և պահանջել լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ուստի անհրաժեշտ է կիրառել տվյալների հավաքագրման հնարավորինս պարզ ու ստանդարտացված գործիքներ:
- *Միջգերատեսչական համագործակցություն* — ազդեցության գնահատման որոշ ցուցանիշներ կարող են պահանջել տարբեր տեղեկատվական համակարգերից տվյալների համադրում և պետական մարմինների միջև համաձայնեցված մոտեցումներ:
- *Իրավական և ընթացակարգային սահմանափակումներ* — առանձին առաջարկությունների կիրառումը կարող է առաջացնել գործող կարգավորումների կամ բյուջետային գործընթացի համապատասխան փուլերի շրջանակում լրացուցիչ որոշումների կայացման անհրաժեշտություն:

Այս ռիսկերի հաղթահարման հիմնական ուղղություններն են՝

- ցուցանիշների միասնական մեթոդաբանության մշակումը,
- տվյալների աղբյուրների քարտեզագրումը,
- փորձնական կիրառումը,
- պետական մարմինների կարողությունների զարգացումը,

- միջգերատեսչական համաձայնեցումը,
- և անհրաժեշտ ռեսուրսների նախնական գնահատումը:

## 6. Առաջարկվող հետագա քայլերը

Հետագա գործողությունները նպատակահարմար է տարբերակել ըստ դրանց իրականացման ժամանակահատվածի՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ առաջնահերթությունների:

### Կարճաժամկետ առաջնահերթություններ

- վերջնականացնել և փաստաթղթավորել այն տեխնիկական փոփոխությունները, որոնք արդեն արձանագրվել են ամփոփաթերթում՝ միջոցառումների անվանումների, նկարագրությունների և առանձին գործող չափորոշիչների մասով,
- պետական մարմնի դիրքորոշումը յուրաքանչյուր առաջարկության վերաբերյալ հստակ տարանջատել փաստացի իրականացված փոփոխությունից և հետագա դիտարկման ենթակա առաջարկությունից, որի ստուգման աղբյուր կարող է հանդիսանալ ԱՍՀՆ 2027թ. վերջնական բյուջետային հայտը,
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող պաշտոնական տեղեկատվության ստացումից հետո համադրել աշխատանքային քննարկումների ընթացքում արձանագրված դիրքորոշումները վերջնական կարգավիճակների հետ:

### Միջնաժամկետ առաջնահերթություններ

- մշակել սոցիալական աջակցության ոլորտի արդյունքային ցուցանիշների միասնական մեթոդաբանական շրջանակ՝ սահմանելով ցուցանիշների հասկացությունները, հաշվարկման մեթոդները, տվյալների աղբյուրները՝ ապահովելով ցուցանիշների կատարողականի հաշվետվողականության գործող պահանջներին համապատասխանությունը,
- փորձարկել որակական և արդյունքային ցուցանիշների սահմանափակ խումբ՝ նախապես գնահատելով տվյալների հասանելիությունը, հավաքագրման բեռը և արդյունքների կիրառելիությունը,
- մշակել տվյալների հավաքագրման և շահառուների հետադարձ կապի ստանդարտացված գործիքներ,
- շարունակել մասնագիտական քննարկումները պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և փորձագիտական համայնքի միջև:

### Երկարաժամկետ առաջնահերթություններ

- աստիճանաբար ներդնել սոցիալական ազդեցության և արդյունքի կայունության գնահատման մեխանիզմներ,

- մշակել և փորձարկել ծախս-արդյունք հարաբերակցության գնահատման միասնական մոտեցումներ,
- արդյունքային ցուցանիշների համակարգում ապահովել ծրագրի նպատակների, միջոցառումների, արդյունքների և ազդեցության միջև ավելի հստակ տրամաբանական կապ,
- պետական մարմինների կարողությունների զարգացումը կապել արդյունքահեն կառավարման և ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության գործնական կիրառման հետ:

Առաջարկությունների իրական առաջընթացը նպատակահարմար է գնահատել ոչ միայն դրանց ընդունման կարգավիճակով, այլև երեք հաջորդական մակարդակով՝

- 1) առաջարկության ներառումը բյուջետային փաստաթղթում,
- 2) դրա գործնական կիրառումը համապատասխան միջոցառման կամ ցուցանիշի շրջանակում, և
- 3) դրա արդյունքում բյուջետային կառավարման որակի կամ սոցիալական արդյունքի չափելի փոփոխությունը:

Առանձին ուշադրության պետք է արժանան այն առաջարկությունները, որոնք ներկայումս դիտարկվում են որպես հետագա փուլերի հարց: Դրանց դեպքում առաջընթացի գնահատման հիմք կարող է հանդիսանալ ոչ միայն վերջնական ընդունումը, այլև անհրաժեշտ մեթոդաբանության մշակումը, տվյալների հասանելիության ապահովումը, փորձնական կիրառման իրականացումը և համապատասխան ինստիտուցիոնալ նախապայմանների ձևավորումը:

## 7. Հապավումների ցանկ

|         |                                                              |
|---------|--------------------------------------------------------------|
| ՀՀ      | Հայաստանի Հանրապետություն                                    |
| ՀՀ ԱՍՀՆ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն             |
| ԲԿԱ ՀԿ  | «Բիզնես և կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| ՄԺԾԾ    | Միջինժամկետ ծախսային ծրագիր                                  |
| ՔՀԿ     | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն                  |

## 8. Աղբյուրներ և տեղեկատվական հիմք

1. «ԱՄՓՈՓԱԳԻՐ»՝ «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» և «Սոցիալական աջակցության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավի իրականացում» ենթադրամաշնորհային ծրագրերի շրջանակներում մշակված նյութեր:

2. Հավելված 1. «ՀՀ ԱՍՀՆ «1011. «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» բյուջետային ծրագրի միջոցառումների բարելավմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ ՀՀ ԱՍՀՆ դիրքորոշումների գույքագրման ամփոփաթեթ»:
3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործընկերների կողմից 2026 թվականի հուլիսի 1-ին աշխատանքային կարգով ներկայացված «ԱՍՀՆ ՄԺԾԾ 2027-2029 թթ. բյուջետային հայտի/ծրագրերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթեթ»:
4. ՀՀ ֆինանսների նախարարություն, 2027-2029 թթ. ՄԺԾԾ և 2027 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման շրջանակում հրապարակված բյուջետային գործընթացի նյութեր՝ [https://minfin.am/hy/page/petakan\\_mijnazhamket\\_tsakhseri\\_tsragre/](https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/) և [https://minfin.am/hy/page/petakan\\_byuj/](https://minfin.am/hy/page/petakan_byuj/):
5. ՀՀ ԱՍՀՆ ՄԺԾԾ 2027-2029 թթ. ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն, հղում՝ <https://social.gov.am/articles/budget/projects:>
6. 2027 թվականի բյուջետային հայտ՝ ներառյալ 2028- 2029 թվականների թարմացված հայտերի, ինչպես նաև 2027 թվականի ծախսեր, հղում՝ <https://social.gov.am/articles/budget/projects:>
7. Budget Partnership, Open Budget Survey 2023, Armenia — Հայաստանի հանրային մասնակցության գնահատականը՝ 11/100: <https://internationalbudget.org/open-budget-survey/country-results/2023/armenia:>